ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Շբ. 5 Մարտ. Կէսօրէ առաջ, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. և Գերշ. Տ. Աւագիկ Եպս. վանական գործերով ներկայացան Վսեմ. Կառավարչին։

● Դշ. 9 Մարտ. — Ընդառաջելով վերջինայս հրաւէրին, Գերշ. Սրբազանները նոյն խնդրով դարձեալ ներկայացան Կառավարչատուն։

● Ուր. 11 Մարտ. — Ս. Յարութեան Տաճարի յունաց բազմամեայ Տեսուչ Արչիմանդրիթ Քիրիաքոսի մահուան առիթով, Յունաց Պատրիարքարանի Ս. Կոստանդիանոս Տաճարին մէջ տեղի ունեցած թաղման կարգին ներկայ եղան Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ.՝ Ս. Յարութեան Տաճարի Տեսուչ Հոգշ. Տ. Լեւոն Արղ., Աւագ Թարգման Հոգշ. Տ. Յուսիկ Արղ., Հոգշ. Տ. Տ. Գեղամ, Ժիրայր, Փառէն և Վրթանէս աբեղաներ, ինչպէս նաև Տիար Կ. Հինդլեան։ — Յուղարկաւորութեան թափօրի մեր Մայրավանքի դրան առջեւէն անցնելուն, մեր կողմէ կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ՝ հանդիսապետութեամբ Գերշ. Տ. Աւագիկ Եպս.ի և մասնակցութեամբ Հոգշ. Հայրերու։ — Այս տխուր առիթով, յանուն Պատրիարքարանիս, ղրկուած էր նաև ծաղկեպսակ մը։

● Գշ. 15 Մարտ. — Կէսօրէ առաջ, քաղաքիս Ամերիկեան Նոր Ընդհ. Հիւպատոս Պր. Էւրիք Ս. Վէնտլին, հետն ունենալով փոխ Ընդհ. Հիւպատոս Պր. Քինօօլվինկը, իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Պատրիարքարանիս։

● Դշ. 16 Մարտ. — Կէսօրին, քաղաքիս Լիբանանեան Ընդհ. Հիւպատոս Պր. Ֆարիտ Սթէֆան իր մեկնման առիթով հրաժեշտի այցելութիւն տուաւ Պատրիարքարանիս։

● Ուր. 18 Մարտ. — Կէսօրէ առաջ, Գերշ Տ. Սուրէն Արքեպս., ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Յուսիկ Արղ.ի և Տիար Կ. Հինդլեանի, փոխ այցելութիւն տուաւ Ամերիկեան Նոր Հիւպատոսին։

ՄԻԱԲԱՆԱԿԱՆՔ

Պատ. Տնօրէն Ժողովոյ կողմէ կատարուեցան պաշտօնէական հետեւեալ նշանակումները.

Ժառ. Վարժարանի և Ընծայարանի առժ. Տեսուչ՝ Գերշ. Տ. Աւագիկ Եպս. Ղազարեան. Փոխ. Տեսուչ՝ Հոգշ. Տ. Վրթանէս Արղ. Գալայճեան։

Թարգմանչաց Վանուց Տեսուչ և Իսրայէլի Հայոց Հոգ. Հովիւ՝ Հոգշ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեան. Տեսչի օգնական և Ժամարար՝ Հոգշ. Տ. Եղնիկ Արղ. Զաւտարեան։

Դարպասընկալներ՝ Հոգշ. Տ. Հայկասէր Վրդ. Պայրամեան և Հոգշ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան։

Ս. Տեղեաց Դիւանի անդամներ՝ Հոգշ. Տ. Տ. Փառէն Արղ. Աւետիքեան և Վրթանէս Արղ. Գալայճեան։

Դիւանապետ՝ Հոգշ. Տ. Ներսէս Վրդ. Բապուճեան։

Գալուածոց Տեսուչ և առժ. Աւագ Թարգման՝ Հոգշ. Տ. Յուսիկ Արղ. Փաղտատեան։

Հանդերձապետ, Շորապետ և Հիւրընկալ՝ Հոգշ. Տ. Գեղամ Արղ. Զաքարեան։

Գանձապետ՝ Հոգշ. Տ. Փառէն Արղ. Աւետիքեան։

Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Դասապետներ՝ Հոգշ. Տ. Տ. Արշակ Արղ. Խաչատուրեան և Ժիրայր Արղ. Թաշճեան։

Կազմուեցաւ նաև Ուխտաւորաց Ընդունելութեան Յանձնախումբ մը, որուն անդամներն են Հոգշ. Տ. Տ. Հայկասէր և Յակոբ վարդապետներ և Յուսիկ, Գեղամ և Փառէն աբեղաներ։

ՍԻՈՆ շնորհաւորելով ամէնքը կը մաղթէ կարողութիւն և լաւագոյն յաջողութիւններ։

ՏԻԿԻՆ ՋԱՐՈՒՀԻ ՀԱՄԱԼԵԱՆ

ՍԻՈՆ ցաւով կ'արձանագրէ Ս. Աթոռոյս Հոգշ. Միաբաններէն Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեանի (ծնեալ Համալեան) մօրը, Ջարուհի Համալեանի մահը, որ տեղի ունեցած է Յունուար 8ին, Պաղտատի մէջ: Հանգուցեալը երկար տարիներ ծառայած է իբրեւ ուսուցչուհի: Եղած է Հալէպի Անկելանոցին հիմնադիրներէն մին, եւ երկար տարիներ ալ նոյն հաստատութեան Վարչութեան անդամ: Ցաճախ եռանդով մասնակցած է Եկեղեցւոյ ի նպաստ կատարուած ձեռնարկներու եւ ջանացած է օգտակար ըլլալ իր կարողութեան չափով:

Մեր խորին ցաւակցութիւնները իր յարգելի ամուսնոյն՝ Տիար Մանուէլ Համալեանի եւ իր զաւակաց, իրենց այս դառն կորուստեան առթիւ:

digitised by A.R.A.R.@